ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 83 -Ն «03» հուլիսի 2023 թ.

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատություններում «Համաշխարհային պատմություն» առարկայի 8-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

7/3/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի _հուլիսի_ _3_-ի

N _83_-Ն հրամանի

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

## 8-րդ դասարան

**Թեմա 1**

***Քաղաքակրթությունների մուտքը նոր ժամանակներ. գաղափարները փոխում են աշխարհը***

**Նպատակ**

Ձևավորել նոր հասարակագի ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները հետազոտելու, վերլուծելու և արդի աշխարհի վրա ունեցած ազդեցությունը գնահատելու հմտություն:

**Վերջնարդյունք**

1. Վերլուծի և մեկնաբանի աշխարհագրական մեծ հայտնագործությունների, Վերածննդի, Ռեֆորմացիայի, գիտական հեղափոխության և լուսավորության գաղափարների ձևավորման և զարգացման նախադրյալները և դրանց հասարակությունների վերափոխման ուղիները:
2. Ներկայացնի այն գաղափարերը և գործընթացները, որոնք արդիականացրեցին հասարակությունները՝ ձևավորելով նոր արժեհամակարգ այդ գաղափարների և գործընթացների վերաբերյալ:
3. Համեմատի և համադրի հասարակությունների վերափոխման ուղիները և գործընթացները:
4. Գնահատի հասարակությունների վերափոխման մեջ գաղափարների դերը:

**Թեմայի բովանդակություն**

1. Տնտեսական համակարգերի փոփոխություններ: Աշխարհագրական մեծ հայտնագործություններ:
2. Մշակութային փոփոխություններ: Վերածնունդ
3. Քաղաքական փոփոխություններ: Ռեֆորմացիա: Նիդերլանդական հեղափոխություն
4. Նոր գաղափարները փոխում են աշխարհը, գիտական հեղափոխություն:
5. Լուսավորության դարաշրջանը:
6. Անգլիական հեղափոխություն:
7. ԱՄՆ պետության առաջացումը:
8. Ֆրանսիական հեղափոխությունը:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>2. Հիմնախնդիրների հետազոտում:<br>3. Սահիկաշարերի պատրաստում:<br>4. Երևակայական ճանապարհորդություն տվյալ ժամանակաշրջանում:<br>5. Բանավեճ: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առօրեական կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

| |
|---|
| **Աշխարհագրություն** - Քարտեզ, աշխարհագրական միջավայրի ուսումնասիրում: **Գրականություն** - Տեքստերի ընթերցում, վերլուծություն: **ՆԶՊ** - Մարտավարության փոփոխություն, բանակի կառուցվածքի, զենքի ձևերի ուսումնասիրում: **Արվեստ** - Փոփոխություններն ու մեկնաբանություններն արվեստում: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 10, Հ 12, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 41, Հ 42, Հ 44, Հ 45 |

<table>
<tr><td colspan="2">Թեմա 2</td></tr>
<tr><td colspan="2">Արդյունաբերական հասարակությունն առաջ է անցնում քաղաքակրթական մրցավազքում</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակ</td></tr>
<tr><td colspan="2">Զևավորել արդյունաբերական հասարակության ձևավորման, զարգացման գործընթացները վերլուծելու և այդ հասարակությունների դերը աշխարհաքաղաքական գործընթացներում գնահատելու հմտություն:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունք</td></tr>
<tr><td colspan="2">1. Հետազոտի այն երևույթներն ու գաղափարները, որոնք արդյունք են արդյունաբերական հասարակությունների:<br>2. Համեմատի արդյունաբերական և ավանդական հասարակությունների զարգացման ուղիները և գործընթացները, պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:<br>3. Վերլուծի արդյունաբերական հասարակությունների զարգացման գործընթացները և ձեռքբերումները, որոնք հանգեցրերին արդյունաբերական հասարակությունների զարգացմանը և առաջնորդությանը աշխարհաքաղաքական գործընթացներում:<br>4. Գնահատի և անժևորի արդյունաբերական հասարակությունների դերը աշխարհաքաղաքական գործընթացներում:</td></tr>
<tr><td colspan="2">Թեմայի բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">1. Արմատական տեղաշարժեր տնտեսության մեջ, արդյունաբերական հասարակությունների զարգացումը, հասարակական կերպափոխումները:<br>2. Արդյունաբերական հասարակությունների զարգացման արևմտյան ուղին. Մեծ Բրիտանիա, Գերմանիա:<br>3. Արդյունաբերական հասարակությունների զարգացման ասիական ուղին . Ճապոնիա:<br>4. Արդյունաբերական հասարակությունները ձևափոխում են աշխարհը. ավանդական հասարակությունների ճգնաժամը:<br>5. Արդյունաբերական հասարակության դրսևորումները մշակութային և առօրյա կյանքում:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>2. Հիմնախնդիրների հետազոտում:<br>3. Հետազոտական աշխատանք:<br>4. Բանավեճ:<br>5. Էսսե:</td><td>Օրինաչափություն<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական ու հասարակական երևույթների, իրադարձությունների օրինաչափություններ:<br><br>Համաշխարհայնացում</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Հասարակագիտություն** - Գաղափարախոսությունների իմացություն:<br>**Գրականություն** - Տեքստերի հետազոտում:<br>**Արվեստ** - Նոր ճյուղերի ու նոր մոտեցումների հետազոտում: | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 10, Հ 12, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 41, Հ 42, Հ 44, Հ 45 | |

| | |
|---|---|
| **Թեմա 3** | |
| ***Վերափոխումները հասարակությունների զարգացման միջոց 19-րդ դարում*** | |
| **Նպատակ** | |
| Ձևավորել 19-րդ դ. պետությունների հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, հակամարտությունները և հեղափոխական գործընթացները վերլուծելու և այդ վերափոխումները գնահատելու հմտություն: | |
| **Վերջնարդյունք** | |
| 1. Վերլուծի նորդարյան հասարակությունների վերափոխումների ուղիները և գործընթացները, դրանց ազդեցությունը աշխարհաքաղաքական գործընթացների վրա:<br>2. Մեկնաբանի բարեկեցության գաղափարները, որոնք ձևավորվեցին և առաջնորդեցին նորդարյան հասարակություններին:<br>3. Համեմատի նորդարյան հասարակությունների զարգացման տարբեր ուղիները:<br>4. Գնահատի վերափոխումները որպես հասարակությունների զարգացման միջոց: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Նապոլեոնյան դարաշրջանը (1799-1815):<br>2. Հեղափոխությունները Եվրոպայում 1830-1840-ական թվականներին:<br>3. Եվրոպան 1820-1870–ական թվականներին (Վիեննայի ժողովից մինչև ազգային պետությունների ստեղծում (Գերմանիա, Իտալիա):<br>4. Ռուսաստան<br>5. Արևելքի ավանդական հասարակություններն ու արդիականացման փորձերը 19-րդ դարում (Օսմանյան Թուրքիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա):<br>6. Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կյանքում:Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը:<br>7. Քաղաքական ու սոցիալական կյանքի զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում 19-րդ դարում: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |

| | |
|---|---|
| 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>2. Նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում: | **Անհատ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը, ո՞րն է նրա բնութագիրը:<br>Անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Հայոց պատմություն** - Գաղափարական փոփոխություններ, ազատագրական պայքար:<br>**Աշխարհագրություն** - Միջավայրի ուսումնասիրում, քարտեզ:<br>**Հասարակագիտություն** - Քաղաքական, տնտեսական և գաղափարական համակարգեր:<br>**Գրականություն** - Համապատասխան տեքստերի մեկնաբանություն:<br>**Արվեստ** - Ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ: | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 10, Հ 12, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 41, Հ 42, Հ 44, Հ 45 | |

| |
|---|
| **Թեմա 4** |
| **Հասարակությունների զարգացման տեսլականը. համաշխարհային կրոններ և գաղափարախոսություններ** |
| **Նպատակ** |
| Ձևավորել նոր դարերի հասարակությունների զարգացման տեսլականները՝ գաղափարախոսությունները վերլուծելու և համադրելու հմտություն: |
| **Վերջնարդյունք** |
| 1. Վերլուծի հասարակությունների զարգացման այն տեսլականները, որոնք ձևավորվեցին նոր ժամանակներում և ուղղորդեցին որոշ հասարակությունների հետագա զարգացումը:<br>2. Մեկնաբանի բարեկեցություն հասկացությունը և համեմատի յուրաքանչյուր հասարակության՝ դրան հասնելու գաղափարական հենքերը:<br>3. Համեմատի և համադրի տարբեր գաղափարախոսությունների տեսությունները և կիրառման ուղիները:<br>4. Գնահատի յուրաքանչյուր հասարակության որևէ գաղափարախոսության ընտրության հարցը: |
| **Թեմայի բովանդակություն** |
| **Համաշխարհային կրոններ**<br>1. Բուդդայականություն<br>2. Քրիստոնեություն<br>3. Իսլամ<br>**Գաղափարախոսություններ**<br>1. Սոցիալիզմ: Մարքսիզմ: Կոմունիզմ: |

| |
|---|
| 2. Պահպանողականություն:<br>3. Լիբերալիզմ:<br>4. Անարխիզմ:<br>5. Սոցիալ-դարվինիզմ:<br>6. Շովինիզմ և ազգայնամոլություն: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. Նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում:<br>2. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>3. Զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն:<br>4. Ֆիլմերի դիտում և քննարկում: | **Համաշխարհայնացում**<br>Ինչպե՞ս է աշխարհում ամեն ինչ կապակցված:<br>Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները:<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Գրականություն** - Համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանություն:<br>**Արվեստ** - Կերպարվեստ, երաժշտություն: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 10, Հ 12, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 41, Հ 42, Հ 44, Հ 45 |

**11-րդ դասարան**

**Պետություն**

| **Թեմա 1** |
|---|
| ***Աշխարհակալություններ (կայսրություններ)*** |
| **Նպատակ** |
| Ձևավորել աշխարհակալությունների (կայսրություններ) ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, կործանման պատճառները և հետևանքները վերլուծելու, աշխարհակալությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը վեր հանելու, աշխարհակալությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները գնահատելու հմտություն: |
| **Վերջնարդյունք** |
| 1. Վերլուծի աշխարհակալությունների ստեղծման, զարգացման և կործանման գործընթացները:<br>2. Համեմատի աշխարհակալությունների ականավոր գործիչների գործունեությունը և առանցքային դրվագները:<br>3. Գնահատի տարբեր կայսրությունների թողած քաղաքակրթական ժառանգությունը |

| |
|---|
| տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական բնագավառներում:<br>4. Արժևորի աշխարհակալությունների ազդեցությունն արդի աշխարհի բազմաբնույթ գործընթացների վրա: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Աշխարհակալությունների ձևավորման ներքին և արտաքին նախադրյալները, առանձնահատկությունները, վերելքի նախադրյալներն ու անկման պատճառները, հետևանքները:<br>2. Ալեքսանդր Մակեդոնացու տերությունը:<br>3. Աքեմենյան տերություն:<br>4. Արաբական խալիֆայություն:<br>5. Կարոլինգյան կայսրություն:<br>6. Սրբազան Հռոմեական կայսրություն:<br>7. Սելջուկյան սուլթանություն:<br>8. Մոնղոլական կայսրություն:<br>9. Սեֆյան Իրան:<br>10. Ցին կայսրություն:<br>11. Ռուսական կայսրություն:<br>12. Բրիտանական կայսրություն:<br>13. Օսմանյան կայսրություն<br>14. Կայսրությունների քաղաքակրթական ժառանգությունը: Աշխարհակալությունները և արդիականությունը: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
|---|---|
| 1. Աղբյուրի ուսումնասիրում:<br>2. Սահիկաշարերի պատրաստում:<br>3. Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>4. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: | **Կառուցվածք և գործառույթ**<br>Ի՞նչ է, ինչի՞ համար է, ինչպե՞ս են փոխկապակցված:<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները: Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուց-վածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայ-մանավորված շատ գործառույթներ: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և կայսրությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |

**Թեմա 2**

***Ազգային պետություններ***

**Նպատակ**

Ձևավորել ազգային պետությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, ազգային պետությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը վեր հանելու, ազգային պետությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները գնահատելու հմտություն:

**Վերջնարդյունք**

1. Վերլուծի ազգային պետությունների ստեղծման նախադրյալները, ձևավորման գործընթացները և զարգացման ուղիները,
2. Համեմատի տարբեր ազգային պետությունների ձևավորման գործընթացները:
3. Ներկայացնի և արժևորի այն գործոնները, որոնք հանգեցրին ազգային պետությունների կայացմանը. իրավական համակարգեր, կրոն, լեզու, միասնական պատմություն:
4. Վերլուծի այն մարտահրավերները, որոնք հաղթահարեցին ազգային պետությունները ձևավորման և կայացման ճանապարհին:
5. Գնահատի ազգային պետությունների թողած քաղաքակրթական ժառանգությունը և արդիականությունը:

**Թեմայի բովանդակություն**

1. Ազգային պետությունների ձևավորման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Ազգային պետությունների առանձնահատկությունները:
3. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը, համակեցության հարաբերությունները:
4. Քաղաքակրթական ժառանգությունը:
5. Ազգային պետությունները և արդիականությունը:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
|---|---|
| 1. Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>2. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների, իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի,

| |
|---|
| երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և ազգային պետությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |

| | |
|---|---|
| **Թեմա 3** | |
| ***Ամբողջատիրական պետություններ*** | |
| **Նպատակ** | |
| Ձևավորել ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը վեր հանելու, ականավոր գործիչների գործունեության առանցքային դրվագները գնահատելու հմտություն: | |
| **Վերջնարդյունք** | |
| 1. Վերլուծի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձևավորման ու զարգացման նախադրյալները, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, արդի աշխարհում նրանց թողած ազդեցությունները:<br>2. Համեմատի ամբողջատիրական և միակուսակցական պետությունները միմյանց և աշխարհակալությունների (կայսրություններ) ու ազգային պետությունների հետ, վեր հանի օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը:<br>3. Գնահատի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձեռքբերումներն ու բացթողումները:<br>4. Գնահատի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների թողած քաղաքակրթական ժառանգությունը և արդիականությունը: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձևավորման ներքին և արտաքին նախադրյալները, առանձնահատկությունները, վերելքն ու անկումը:<br>2. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը, համակեցության հարաբերությունները:<br>3. Քաղաքակրթական ժառանգությունը: Ամբողջատիրական և միակուսակցական պետությունները և արդիականությունը: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
| 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, | **Համակարգ (պետություն)** |

| | |
|---|---|
| աղբյուրների ուսումնասիրություն:<br>2. Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>3. Աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում:<br>4. Ֆիլմերի դիտում և քննարկում:<br>5. Բանավեճեր, քննարկումներ:<br>6. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: | Պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Համաշխարհայնացում** Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և ամբողջատիրական ու միակուսակցական պետությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** -Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |

| |
|---|
| **Թեմա 4** |
| ***Ժողովրդավարական պետություններ*** |
| **Նպատակ** |
| Ձևավորել ժողովրդավարական պետությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, ժողովրդավարական պետությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը վեր հանելու, ժողովրդավարական պետությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները գնահատելու հմտություն: |
| **Վերջնարդյունք** |
| 1. Վերլուծի ժողովրդավարական պետությունների ձևավորման, զարգացման ուղիները, այն կառույցները, որոնք հիմք են դարձել այդ պետությունների ձևավորման համար:<br>2. Մեկնաբանի ժողովրդավարական պետությունների պատմությունը, վերլուծի *արդարություն* հասկացությունը և դրա դրսևորման ձևերը ժողովրդավարական պետություններում:<br>3. Արժևորի ստեղծարար գաղափարների ազդեցությունն ժողովրդավարական հասարակությունների ձևավորման ընթացքում:<br>4. Գնահատի ժողովրդավարական պետությունների թողած քաղաքակրթական |

| |
|---|
| ժառանգությունը և արդիականությունը: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Ժողովրդավարական պետությունների ձևավորման ներքին և արտաքին նախադրյալները, առանձնահատկությունները:<br>2. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը, համակեցության հարաբերությունները:<br>3. Քաղաքակրթական ժառանգությունը: Զարգացման հեռանկարները:<br>4. Ժողովրդավարական պետությունները և արդիականությունը: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
|---|---|
| 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>2. Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>3. Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում: | **Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և ժողովրդավարական պետությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** -Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |

| |
|---|
| **Թեմա 5** |
| ***Հեղափոխություն*** |
| **Նպատակ** |
| Ձևավորել հեղափոխությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, հեղափոխությունների ու ներկայիս աշխարհի առնչությունները վեր հանելու, ականավոր հեղափոխական գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները գնահատելու հմտություն: |

| **Վերջնարդյունք** |
|---|
| 1. Մեկնաբանի հեղափոխության տեսակները, վերլուծի հեղափոխությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները: <br>2. Համեմատի տարբեր ժամանակներում և տարբեր բնագավառներում տեղի ունեցած հեղափոխությունները: <br>3. Արժևորի և գնահատի հեղափոխության նորարարություն բաղադրիչը և ազդեցությունն իր համայնքի վրա: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Քաղաքական հեղափոխություն: <br>2. Ոչ բռնի հեղափոխություններ: <br>3. Արդյունաբերական (սոցիալ-տնտեսական) հեղափոխություն: <br>4. Գիտատեխնիկական հեղափոխություն: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
|---|---|
| 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն: <br>2. Հիմնախնդիրների հետազոտում: <br>3. Սահիկաշարերի պատրաստում: <br>4. Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում: <br>5. Բանավեճեր, քննարկումներ: <br>6. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: | **Օրինաչափություն** <br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների, իրադարձությունների օրինաչափություններ: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և հեղափոխությունները: <br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով: <br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում: <br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը: <br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |

| **Թեմա 6** |
|---|

***Գաղափարախոսություն***

**Նպատակ**

Ձևավորել գաղափարախոսությունների ձևավորման, տարածման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, գաղափարախոսությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը վեր հանելու, ականավոր գործիչների, ուսմունքների հիմնադիր հեղինակների ու գաղափարախոսների գործունեությունը գնահատելու հմտություն:

**Վերջնարդյունք**

1. Վերլուծի հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բնույթի գաղափարախոսությունների ձևավորման, զարգացման և կիրառման գործընթացները և հետևանքները:
2. Մեկնաբանի և արժևորի տարբեր գաղափարախոսությունները, որոնց նպատակն էր հասնել մարդկության բարեկեցությանը՝ կիրառելով տարբեր միջոցներ:
3. Համեմատի ականավոր գործիչների, ուսմունքների հիմնադիր հեղինակների ու գաղափարախոսների գործունեությունը:
4. Ուսումնասիրի և մեկնաբանի, թե իր հետազոտած որ գաղափարախոսություններն են գործում իր համայնքում և ինչպես:
5. Գնահատի այն գաղափարախոսությունները, որոնք ազդեցություն են թողել և ունեն իր համայնքում:

**Թեմայի բովանդակություն**

1. Կրոնական գաղափարախոսություն:
2. Հասարակական-քաղաքական գաղափարախոսություն:
3. Ազգային (ազգայնական) և ազգայնամոլական գաղափարախոսություն:
4. Դասակարգային գաղափարախոսություններ:
5. Տնտեսական գաղափարախոսություններ:
6. Մշակութային ուղղություններ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող գաղափարներ** |
|---|---|
| 1. Սահիկաշարերի պատրաստում:<br>2. Ֆիլմերի դիտում և քննարկում:<br>3. Բանավեճեր, քննարկումներ:<br>4. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում:<br>5. Ռեֆերատ: | **Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: Գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում, միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում, ստեղծարարություն: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Հայոց պատմություն** - Տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և գաղափարախոսությունները:
**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:

| |
|---|
| **Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Պատմաճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր:<br>**Հասարակագիտություն** |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ23, Մ27, Մ28, Մ29, Մ31** |